Արձանագրություն N 3
ՁԻՀ-ԳՀԾՁԲ 17/1 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18 օգոստոսի 2017թ
ժամը 12:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ժենյա Ազիզյանը
անդամներ՝ Ջուլիա Թումասյանը, Թադևոս Նալբանդյանը
քարտուղար՝ Վարդան Նավասարդյան

I. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների մասին

(Ժենյա Ազիզյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.
Հրավերով սահմանված ժամկետում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստաթղթերը և գնահատման թերթիկները տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի հրավերով սահմանված պահանջի առկայության վերաբերյալ եզրակացությունը, ըստ որի Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հանձանաժողովը որոշեց.
ա/ ՌԴ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

4. Ներկայացված գնային առաջարկի և գնահատման արդյունքների հիման վրա հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել ՌԴ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ «Յուգլիֆտ» ԴՍՊԸ -ին:
Ընտրված մասնակից է ճանաչվել որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ժենյա Ազիզյան)

5. Հանձնաժողովը որոշեց.

ա/ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պայմաններով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Ժենյա Ազիզյան

անդամներ՝ _____ Ջուլիա Թումասյան

_____ Թադևոս Նալբանդյան

քարտուղար՝ _____ Վարդան Նավասարդյան